ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«27» 09 2018թ.
N 54-Հ

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

«27» 09 2018թ.
N 1

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ դատական դեպարտամենտը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-ՆԳ որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2018թ. հունիսի 15-ի «Բյուջեների կատարման» կարգի 38-րդ կետի պահանջներով՝ ՀՀ դատական դեպարտամենտին կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ դատական դեպարտամենտին մատուցում է կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իսկ ՀՀ դատական դեպարտամենտը վճարում է այդ Ծառայությունների դիմաց՝ սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:
2. Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2018թ. մայիսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.
   1) Ծառայությունների որակյալ, անխափան մատուցումը և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,
   2) Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը,
   3) ՀՀ դատական դեպարտամենտում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ՝ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,
   4) Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո,
   5) Կառավարական քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ դատական դեպարտամենտը չի կատարում Ծառայությունների դիմաց բաժանորդային վճարումը՝ ըստ սույն համատեղ հրամանի 4-րդ կետի 4) ենթակետի:
4. ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է.
   1) ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը՝ ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների,
   2) Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,
   3) Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

Դ. Սարգսյան

№	Տեղադրման վայրը	Կառավարական քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի աշխատասենյակ	1 x 225 000	225 000
2.	ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ	1 x 225 000	225 000
3.	կապի անվտանգությունն ապահովող հատուկ ծառայություններ	2 x 100 000	200 000
4.	ընդամենը տարեկան վարձը		650 000
			վեց հարյուր հիսուն հազար դրամ

4) Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին՝ ոչ ուշ, քան եռամսյակը մեկ: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով,
5) Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում՝ Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,
6) ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումը՝ ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

5. Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ դատական դեպարտամենտի 13.12.2011թ. N74-Ա և 09.01.2012թ. համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

_____ Ա. Վանեցյան

ք. Երևան, Նալբանդյան 104
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900018301011
հվհհ 01507079

Կ.Տ.

ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավար

_____ Կ. Փոլադյան

ք. Երևան, Վ. Սարգսյան N5
ՀՀ Ֆին. նախ. գործառնական վարչության
համայնքների և պետական հիմնարկների
բյուջեների հաշվառման բաժին
հ/հ 900011192151
հվհհ 02583241

Կ.Տ.

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____հեռախոս 199